Համատեղ հայտարարություն ՀՀ-ԵՄ կապակցվածության գործընկերության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը և Եվրոպական Միությունը վերահաստատում են երկկողմ հարաբերություններն ամրապնդելու և ՀՀ-ԵՄ կապակցվածության գործընկերության միջոցով տարածաշրջանային համագործակցությունն ընդլայնելու իրենց համատեղ տեսլականն ու հանձնառությունը: Սա համապատասխանում է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրին, 2025 թվականի դեկտեմբերին ընդունված «ՀՀ-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգ» փաստաթղթին և 2026 թվականի մայիսի 5-ին Երևանում կայացած ՀՀ-ԵՄ անդրանիկ գագաթնաժողովի համատեքստում է:

Այս գործընկերությունը, որն ամբողջովին համահունչ է ԵՄ «Գլոբալ դարպասներ» ռազմավարությանը, «Միջտարածաշրջանային կապակցվածության օրակարգ»-ին, «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությանը, «ԹՐԻՓՓ» նախագծին, և ելնելով «Սևծովյան տարածաշրջանին ԵՄ ռազմավարական մոտեցման վերաբերյալ համատեղ հաղորդակցություն» փաստաթղթից, ինչպես նաև համահունչ երրորդ երկրների հետ ԵՄ համագործակցության հաստատված քաղաքականություններին ու ձևաչափերին՝ արտացոլում է ընդհանուր հետաքրքրվածությունը՝ ամրապնդելու տրանսպորտային, էներգետիկ և թվային ներառական, անվտանգ և դիմակայուն կապեր: Այն նպաստում է կայուն զարգացմանը և խթանում առևտրի աճը, մարդկանց միջև շփումները, դիմակայունությունը, փոխադարձ բարգավաճումը և տարածաշրջանային խաղաղությունը:

Երկու կողմերն ընդունում են ներքոնշյալ կետերի ռազմավարական կարևորությունը.

1. **Տրանսպորտ** - տարածաշրջանային տրանսպորտային ցանցերին, ներառյալ՝ Անդրկասպյան տրանսպորտային ընդլայնված միջանցքին Հայաստանի ներառական ինտեգրման ընդլայնում համաձայնեցված իրագործելիության ուսումնասիրությունների և համատեղ սահմանված առաջնահերթությունների տեխնիկական գնահատումների միջոցով,
2. **Էներգետիկա** - աջակցություն Հայաստանի ջանքերին՝ էներգետիկ անկախությունը, դիմակայունությունը և դիվերսիֆիկացումն ավելացնելու, էլեկտրական ցանցն ամրապնդելու, կուտակիչ կարողություններն ընդարձակելու և տարածաշրջանային ինտեգրումն առաջ մղելու, այդ թվում՝

էներգետիկ արդյունավետության, վերականգնվող էներգետիկայի, էլեկտրաէներգիայի փոխկապակցման ենթակառուցվածքի շուրջ համագործակցության և անվտանգ ու կայուն ցածր ածխածնային տեխնոլոգիաների զարգացմամբ մատակարարման կախվածությունների նվազեցման միջոցով,

3. **Թվային** - Հայաստանի և ԵՄ թվային էկոհամակարգերի միջև համագործակցության և հետագա ինտեգրման ամրապնդում այդ թվում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են անվտանգ և հուսալի կապակցվածությունը, բարձր տեխնոլոգիաները, արհեստական բանականությունը և կիսահաղորդչային կարողությունները՝ միաժամանակ առաջ մղելով թվային ոլորտում տաղանդների զարգացումը և նպաստելով եվրոպական թվային տնտեսությանն ինտեգրմանը:

Այս նպատակների աջակցման համար երկու կողմերն առաջ կմղեն առաջնահերթ նախագծերը և նախաձեռնությունները տեխնիկական համագործակցության, իրագործելիության ուսումնասիրությունների, միջազգային ֆինանսական հաստատությունների հետ փոխգործակցության և մասնավոր հատվածի մասնակցության միջոցով:

Ավելին, մարդկանց միջև կապերի ամրապնդումն էական է՝ ապահովելու ենթակառուցվածքային ներդրումների վերածումը տևական քաղաքական, տնտեսական և սոցիալական ինտեգրման:

Մարդկանց միջև նախաձեռնությունները նպատակ ունեն խթանել փոխանակումները բիզնեսի (ձեռնարկատիրությունների), կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ասպարեզներում և ամրապնդում են փոխըմբռնումը, հասարակական դիմակայունությունը և տարածաշրջանային կապերը՝ հիմնված ընդհանուր արժեքների և ապագայի տեսլականի վրա:

Այս հայտարարությունն արտացոլում է Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության մտադրությունը՝ հետամուտ լինելու համագործակցային, փոխշահավետ և հեռանկարային, հավակնոտ գործընկերության՝ ճանապարհ հարթելով շոշափելի արդյունքների համար, որոնք ամրապնդում են Հայաստանի ինտեգրումը եվրոպական տրանսպորտային, էներգետիկ և թվային ցանցերին և նպաստում՝ տարածաշրջանային խաղաղությանը, կայունությանը և կապակցվածությանը:

Ստորագրվել է 2026 թվականի մայիսի 5-ին Երևանում:

Հայաստանի Հանրապետության կողմից	Եվրոպական Միության կողմից
արտաքին գործերի նախարարի տեղակալ պրն Վահան Կոստանյան	Եվրոպական հանձնաժողովի՝ ընդլայնման և արևելյան հարևանության գլխավոր տնօրինության արևելյան հարևանության և Թուրքիայի հարցերով տնօրեն տկն Ադրիեն Կիրալի